


Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ. Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, «Զանգակ» հրատ., 2013, 408 էջ:

Հայ բառարանագրությունը դարերի հարուստ ավանդույթներ ունի. մեզանում տպագիր բառարանագրության հիմքը



դրել է Երեմիա Մեղրեցին¹: Հայ, մասնավորապես գրաբարի բառարանագրությունը զարգացման նոր աստիճանի է բարձրացել Վենետիկի Մխիթարյան միաբանության ստեղծումից հետո: Նախ ինքը՝ միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին է կազմել գրաբարի երկհատորանի ծավալուն բառարան²: Դրա հրատարակությունից հետո անցած տասնամյակների ընթացքում բազմաթիվ նոր ձեռագրերի հայտնաբերումը, մի շարք մատենագիրների երկերի հրատարակումը, հազարավոր նորահայտ բառերի շրջանառության մեջ մտնելը հայերենի, մասնավորապես գրաբարի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում նոր խնդիրներ են առաջ քաշում: Անհրաժեշտ էր կազմել նոր բառարան, որին ձեռնամուխ են լինում Մխիթարյան միաբանության երեք ականավոր ներկայացուցիչներ: Նոր բառարանի հեղինակները, օգտագործելով մեր նախկին բառարանները և օգտվելով ժամանակի օտարերկրյա բառարանագրական առաջավոր փորձից, ստեղծում են մի այնպիսի բառարան, որը դարձավ հետագա բոլոր բառարանների մայրը³: Բավական է ասել, որ դրա հիման վրա են

կազմվել գրաբարյան հետագա բոլոր բառարանները⁴:

Գրաբարի բառարանագրության ասպարեզում նորություն է վերջերս հրատարակված բառարանը, որը հեղինակել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խաչատրյանը: Նա նոր անուն չէ բառարանագրության բնագավառում. լեզվաբանը XX դարավերջերից հայտնի է նաև որպես բառարանագիր: Լ. Խաչատրյանը կազմել է գրաբարի ձևաբանորեն տարարժեք բառերի համառոտ և ընդարձակ բառարաններ⁵:

Խնդրո առարկա բառարանն ընդգրկում է V–XI դդ. գրաբար մատենագրության մեջ սփռված շուրջ 10 հազար բառ ընտրության որոշակի սկզբունքով: Ելնելով բառարանի նպատակից, խնդիրներից և գործնական արժեքից՝ հեղինակը բառարանում զետեղել է մատենագրական այն հուշարձանների նյութը, որ նախատեսված է հումանիտար բուհերի գրաբարի դասընթացով՝ գործնական աշխատանքների համար: Բառարանը նպաստում է բուհական ծրագրով նախատեսված մատենագրական երկերի թարգմանությանը, ինչպես նաև հաղորդում է որոշակի քերականական գիտելիքներ գրաբարից: Ըստ այդմ, յուրաքանչյուր գլխաբառի բառահորվածում այն ներկայացնում է ոչ միայն բառի մաստներն ու դրանց նրբերանգները, այլև տալիս է բառի խոսքիմա-

¹ Երեմիա Մեղրեցի. Բառգիրք հայոց, Այլիոռնա, 1698:

² Մ. Սեբաստացի. Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս, Վենետիկ, 1749–1769:

³ Գ. Ավետիսյան, Խ. Սյունիսյան, Մ. Ավագեթյան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Բ, Վենետիկ, 1836–1837:

⁴ Մ. Ավագեթյան. Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846 (երկրորդ հրատ. 1865), Ռ. Մ. Ղազարյան. Գրաբարի բառարան, հ. Ա, Բ, Երևան, 2000, Լ. Շ. Հովհաննիսյան. Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

⁵ Լ. Մ. Խաչատրյան. Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, Երևան, 1998, նույնի՝ Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Երևան, 2003:

յացնել գլխաբառի ոչ թե հնարավոր բոլոր նշանակությունները, այլ փորձել ենք մատուցել էականը, գլխավորը, որոնք կարող են օգնել ուսանողին, թարգմանչին՝ ընտրելու բնագրային բառի հիմնական, գլխավոր նշանակությունը: Այն դեպքում, երբ վերոբերյալ բառարաններում բազմիմաստ բառերը տրված են մեկ տասնյակից ավելի նշանակություններով, մենք բավարարվել ենք նման բառերի համար 4-5 հիմնական իմաստ վկայելով, որոնք կարող են բավարարել գրաբարյան բնագրերը լիարժեքորեն թարգմանելու խնդրին» (էջ 4):

Ծանոթանալով բառարանի կառուցվածքին՝ կարող ենք ասել, որ բառարանը կազմված է ճիշտ սկզբունքներով, այսպես՝

1) Որպես առանձին գլխաբառեր ներկայացված են.

ա) Հենակետային բառերը, որպես սերող հիմքեր, և դրանցից ձևավորված բարդություններն ու ածանցական կազմությունները, ինչպես՝ Ազգ, Ազգաբան, Ազգագիր, Ազգաթիւ, Ազգական, Ազգակից, Ազգակցութիւն և այլն:

բ) Բառակազմական տարբերակները. Աւանդ – Աւանդական, Աւեր – Աւերակ, Զօրաւորութիւն – Զօրութիւն, Եզր – Եզրական, Էակ – Էական, Պարունակ – Պարունակական – Պարունակական և այլն:

գ) Միևնույն բառի համադրական և վերլուծական տարբերակները, ինչպես՝ Աղօթս առնել՝ կալ – Աղօթել, Ակն ածել – Ակնածել, Զմտաւ ածել – Մտածել, Սպասարկանել՝ ունել՝ տանել՝ ի սպասու կալ՝ ի սպաս դնել – Սպասաւորել և այլն:

դ) Հնչյունական տարբերակները. Համագն – Համագնեայ – Համագուն, Հոգաբարձ – Հոգեբարձ – Հոգաբարձու, Տաղանդ – Տաղանտ և այլն:

ե) Բայանունները. Ազդումն, Ծագումն, Ծալումն, Համբարձումն, Յանգումն, Շարժումն, Փոփոխումն, Փլուզումն և այլն:

զ) Անցյալ և ենթակայական դերբայները, որոնք ցուցաբերում են խոսքիմասային տարարժեքություն՝ հանդես գալով գոյականի կամ ածականի արժեքներով. Առաքեալ, Գերագարդեալ, Դբօշեալ, Անկարող, Երգեցող, Հագներգող, Նետող, Քերթող և այլն:

2) Գլխաբառերը մատուցված են հետևյալ կերպ.

ա) Բառակազմական կամ հնչյունական տարբերակներն առանձին-առանձին տրված են հատուկ փակագծերով, որին հաջորդում է ընդհանուր բացատրությունը, ինչպես

ԲԱԶՄԱԾԻՆ } ա. Շատ երեխա բերող,
 ԲԱԶՄԱԾՆՈՒՆԵՂ } բազմազավակ,
 } բազմածնունդ:

բ) Համանուն բառերը տրված են որպես առանձին գլխաբառեր և համարակալված են արաբական թվանշաններով.

ՎԱՌ՝ ա. Պայծառ վառված, լուսավոր, փայլուն: գ. Բորբորվելը, վառվելը, պայծառություն:

ՎԱՌ՝ (պիլ), ի, ից, գ. 1. Նուրբ՝ ընտիր կտորից զարդարուն քող: 2. Ասեղնագործած զարդարուն արքայական դրոշակ: 3. Արքայական ծիրանի: 4. Բեհեզ, մետաքսե ասեղնագործ դիպակ:

գ) Եթե գլխաբառը համատեղում է խոսքիմասային տարարժեքություն, և նրա երկատված բառական նշանակությունները հատուկ տարբերակված չեն, ապա դրանց համար տրվել է ընդհանուր բացատրություն, ինչպես

ԱՏԵՆԱԿԱԼ, ի, աց, ա./գ. Ատյանի անդամներից ամեն մեկը, դատավոր, խորհրդական, դպիր:

դ) Եթե տարարժեք բառերի գոյ./ած. իմաստները բացատրվում են ընդհանուր նշանակությամբ, ապա գոյականական իմաստի տարբերակումը կատարվել է լրացուցիչ բառերի օգնությամբ (մարդ, անձ և այլն), ինչպես՝

ԱԶԳԱԿԱՆ, ի, աց, ա./գ. Նույն ազգից, ցեղից՝ տոհմից սերած, արյունակից (անձինք): ա. 1. Բնույթով իրար նման, միա-

նման: 2. Ազգային, հայրենական, ցեղական:

ե) Եթե տարարժեք բառերի երկատված արժեքները տարբերակված են, ապա այդ արժեքները տրված են տարբերակված նշումով, ինչպես՝

ՀԱՆԳՈՒՇՆ, ա. Զգուշավոր, գուսպ, ամփոփ, սեղմ: մ. Զգուշությամբ, զսպելով:

3) Կայուն կապակցություններն ու դարձվածները տրված են որոշակի սկզբունքով ու դասավորության կարգով.

ա) Դրանք մատուցված են բառակապակցության առաջին բառերի կամ կապակցության հիմնական (իմաստակիր) բաղադրիչների տակ. կապակցությունը տրված է գլխաբառի տեսքով, պարբերության սկզբից, գծիկով, ինչպես՝ ԱԶԴ գլխաբառի բացատրությանը հաջորդում են հետևյալ դարձվածները՝

– Ազդ առնել, Բմաց տալ, հայտնել, տեղեկացնել:

– Ազդ լինել (իմ), Բմաց տրվել, իմացվել:

– Ազդ տալ, Ազդարարել:

բ) Այդպես են տրված նաև միևնույն գլխաբառի թեքված ձևերով կազմված կապակցությունները, որոնք գործածվում են կա մ նույն, կա մ տարբեր խոսքիմասային արժեքներով, ինչպես՝

ԱՌԱՋ գլխաբառի բացատրությանը հետևում է՝

– Առաջս առնել, Սկսել:

– Առաջս դնել, Գլուխների բաժանել (գիրքը):

գ) Բայական որոշ հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչն անկախ գործածություն չունի, ամբողջությամբ տրված են որպես գլխաբառեր՝ ըստ այբբենական կարգի, ինչպես՝

Օաղկաքաղ առնել՝ լինել՝ երթալ, Մատնացոյց առնել՝ լինել և այլն:

դ) Միևնույն գլխաբառով կազմված տարբեր կայուն կապակցություններն ու դարձվածային միավորները բերված են առաջին բաղադրիչի տակ և գերադաս անդամի կրկնումից խուսափելու համար տրված են բուրգով, ինչպես՝

– Ազդ առնել լինել (իմ) տալ և այլն:

4) Քերականական հղումները տրված են հետևյալ կերպ. բառարանագրության մեջ ընդունված քերականական հղումներով բնութագրված են բոլոր բառերը, հատկապես նյութական բովանդակություն ունեցող (լիիմաստ կամ թեքական) խոսքի մասերը: Խոսքը մասնավորապես վերաբերում է գոյականի և բայի թեքական ձևերին, հոլովվող ածականներին ու թվականներին, ինչպես նաև դերանունների հոլովական տիպերին:

Ա. Անուն խոսքի մասեր:

ա) Հոլովվող անունների դեպքում տրված են եզակի և հոգնակի սեռականի ձևերը, ինչպես՝

ԱՄԴՈՅ, ի, աց, ԳԵՂԵՅԻԿ, ցկի, կաց, ԴԱԸԸ, ի, ից, ԿԸԿՆԱԿ, ի, աց, ՄԵԾ, ի, աց, ՊՏՈՒՂ, ոյ, ոց, ՔԱԶ, ի, աց:

բ) Անեզական բառերի դեպքում հաճախ տրված է հոգնակի սեռականը (ինչպես նաև հոգնակի գործիականը), ինչպես՝ ԲՈՒՐՄՈՒՆԸ, մանց, ԳՆԱՅՔ, ցիք, ցիւք, ԽՕՍՔ, սից, ՄԻՏՔ, մտաց, մտօք և այլն:

գ) Ըստ անհրաժեշտության գլխաբառի եզակի և հոգնակի սեռականի ձևերի հետ տրված է նաև հոգնակի ուղղականի ձևը, ինչպես՝ ԴԱՇՆ, ին, անց, ինք, ՀԱՄԱՆՈՒՆ, ուան, ուանք կամ ունք, անց, ՈՒՍՈՒՄՆ, ման, մանց, մունք և այլն:

դ) Եթե թեք հոլովաձևերում գլխաբառը ենթարկվում է հնչյունափոխության, հոլովիչները տրված են նախորդ բաղադային կամ հնչյունափոխված հիմքի հետ, ինչպես՝ ՆԱԽԱԲԺԻՇԿ, բժշկի, ՓԱՌԱԿԻՅ, կցի, աց, ՓԱՓԿԱԿԵԱՅ, կեցի, աց, ԲՈՒՆԸՄԱՊՏՈՒՂ, պտոյոյ, ոց և այլն:

ե) Հոլովական զուգաձևություն ունեցող բառերը տրված են սեռականում հանդիպող բոլոր հոլովիչներով. սկզբում նշված է հիմնական (նախնական) հոլովիչը, ինչպես՝ ԲԱԸԸԸԿԱՅՆ, գունի, ից կամ աց, ՅՕԸԸՆՈՒԱՇ, ոյ, ոց կամ ի, աց, ՓՈՂՈՒԱՇ, ոյ կամ ի, ՕԹԵԻԱՆ, ի, աց կամ ից, ՏՂԱՅ (ասոր.), ոյ, ոց կամ ի, ից և այլն:

զ) Անկանոն հոլովման գոյականները տրված են բոլոր թեք հոլովներով, քանի որ հոլովական ցուցիչներ չունեն, ինչպես՝ ՏԷՆ, տեառն, տերամբ, տեարք, տերանց կամ տեարց և այլն:

է) -Ութին անգամ գոյականների սեռական հոլովածը հասկանալի պատճառով չի նշված, միաժամանակ չեն նշվել այն բառերի հոլովական ձևերը, որոնց թեքական ձևերը մատենագիտական և բառարանագրական վկայություններով ճշգրտված չեն (պայմանավորված թեք ձևերով գործածված չլինելու հանգամանքով):

ը) Բառերի խոսքիմասային արժեքները տրված են ընդունված համառոտագրության կարգով՝ գ. (գոյական), ա. (ածական), մ. (մակբայ) և այլն:

Բ. Բայերը բնութագրված են հետևյալ կերպ.

ա) Բայերը տրված են անորոշ դերբայի ձևով. Ե և Ի լծորդությունները տարբերակելու համար Ի լծորդության բայերի դեպքում փակագծում տրված է սահմանական ներկայի եզակի թվի 1-ին դեմքի վերջավորությունը, ինչպես՝ ԱԳԱԵԼ (իմ), ԲԱԶՄԵԼ (իմ), ԽՕՍԵԼ (իմ), ԲԱՅԱԶԼԵԼ (իմ) և այլն:

բ) Բոլոր բայերի համար տրված են անցյալ կատարյալի եզակի թվի 1-ին դեմքի խոնարհման վերջավորությունները՝ բայի խոնարհման տիպը ցույց տալու համար, ինչպես՝ ՆԵԼԵԼ, եցի, ԽՕՍԵԼ (իմ), եցայ, ՀԱՆԴԻՄԱՆԱԼ, ացայ, ԱՅՏՆՈՒԼ, եայ և այլն:

գ) Եթե չեզոք սեռի բայերն ունենում են նաև ներգործաձև խոնարհում, ապա տրվում են համապատասխան խոնարհումների վերջավորությունները, ինչպես՝ ՅԱՄԱՌԵԼ, եցի և եցայ, չ. ՀԱԿԱՄԻՏԵԼ, եցի և եցայ, չ., ն., ՉԱՅՆԱԿՅԵԼ, եցայ և եցի, չ., ն., ՃԱՊԱՂԵԼ, եցի, ն., եցայ, չ. և այլն:

դ) Հաճախ բայի անցյալ կատարյալի հետ նշված են նաև բուն հրամայականի ձևերը, ինչպես՝ ՏԵՍԱՆԵԼ, տեսի, տես, ԲԵԿԱՆԵԼ, բեկի, բեկ, ՀԱՏԱՆԵԼ, հատի, հատ և այլն:

ե) Որոշ դեպքերում տրված են նաև բայի անցյալ դերբայը, նրա հիմքը կամ միայն վերջավորությունը, ինչպես՝ ՋԵՌՆՈՒԼ, ոայ, ռեայ կամ ռուցեայ...., ՀԱՆԴԱԼԵԼ, եցի, եա՛, եայ, ԳԱԼ, եկի, եկ, եկա՛յք, եկեայ և այլն:

զ) Գլխաբառի հիմնական հատկանիշներից հետո նշված է նաև բայի սեռը՝ ն. (ներգործական), չ. (չեզոք), հ. (հասարակ) և այլն:

ԲՆԱԽՕՍԵԼ, եցի, ն. չ., ՀԱՅԵԼ (իմ), եցայ, չ., ՄԵԼԿԱՆԱԼ, ացայ, ացի՛ր, ն., չ., հ.:

է) Եթե ներգործական սեռի բայը հանդես է գալիս նաև կրավորական կամ չեզոք սեռերի իմաստներով, ապա ներգործական սեռի իմաստներից հետո տրված է կրավորաձև խոնարհման վերջավորությունը՝ կ. չ. հղումով, ինչպես՝

ՀԱՏԱՆԵԼ, հատի, հատ, ն.: հատայ, հատիք, կ. չ., նույն նշ.:

ՀԱԼԿԱՆԵԼ, յարկի, յարկ, ն.: կայ, կեայ, կ., չ., նույն նշ.:

5) Բառիմաստի բացատրությունը տրված է հետևյալ կերպ. բառիմաստի բացատրությունը բառարանի կենտրոնական մասերից մեկն է, որ նախատեսում է բացահայտել մեկիմաստ և բազմիմաստ բառերի նշանակությունները ու դրանք մեկնաբանել առանձին-առանձին:

Ժամանակակից բառարանագրության մեջ օգտագործում են բառիմաստի բացատրության տարբեր եղանակներ. սույն բառարանում մասնավորապես կիրառվել են՝

Ա) Իմաստաբանական կամ նկարագրական սահմանումը. իմաստային բացատրության այս եղանակը վեր է հանում բառով արտահայտված հասկացության բովանդակությունն ու նրա ծավալը, ինչպես՝

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. Գուշակ լինելը, գուշակելը, նախատեսություն, մարգարեություն: 2. Գաղտնի ազդարարելը, լուր տալը, մատնելը: 3. Հայտարարություն, նշանակ, նշան:

Բ) Հումանշային սահմանումը. սա բառի նշանակության սահմանումն է այլ հումանիշ բառերի կամ բառակապակցությունների միջոցով: Օրինակ՝

ԴԸՄՏ (պիլ.), ի, ից կամ աց, գ. 1. Ծառ: 2. Պտղատու ծառերի և ծաղիկների այգի, պարտեզ: 3. Եղեմ: 4. Երկնային արքայություն:

Գ) Բառակազմական սահմանումը. կիրառվել է ածանցավոր բառերի իմաստի բացատրության դեպքում. բացատրությունը

տրվել է այն բառի նշումով, որից կազմված է ածանցավոր բառը:

Օրինակ՝ ՕԶՄՊԱՇՏՈՒԹԻՒՆ բառի բացատրությունը տրվել է հղում կատարելով այդ բառի բառակազմական հիմքին և նրա իմաստին (օձապաշտ), հմմտ.

ՕԶՄՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. Օձապաշտ լինելը, օձ պաշտելը (հեթանոսական արևելք):

Ղ) Հղման կարգով սահմանումը.

ա) Երբ հոմանիշ բառերը, ըստ այբբենական դասավորության, միմյանց չեն հաջորդում, իմաստային բացատրությունը չկրկնելու համար գործադրվել է տե՛ս հղումը: Օրինակ՝ ԳԵՂԵՅԿՈՒՂԷՇ, տե՛ս ԳԵՂԵՅԿԱՍՏԵՂՆ:

բ) Եթե գլխաբառի բառական նշանակությունները պակաս են, քան հղում կատարված բառինը, ապա փակագծում տրվել է այն նշանակության համարը, որին համապատասխանում է գլխաբառի նշանակությունը, ինչպես՝

ԽՐԱՄԱՍ, գ. 1. տե՛ս ԽՐԱՄ (1, 2): 2: 3:

6) Գլխաբառի բազմիմաստ նշանակությունները և փոխաբերական իմաստները տրված են հետևյալ կերպ.

ա) Բառերի բազմիմաստ նշանակությունները միմյանցից բաժանվել են արաբական թվանշաններով և տրվել են մեծատառերով, ինչպես՝

ՎԱՍՍԱԿԵԼ, եցի և եգայ, չ. ն. 1. Աշխատել, ջանալ, տքնել, չարչարվել, տառապել: 2. Սշակել: 3. Հոգնել, ձանձրանալ: 4. Հուսահատվել: 5. Շահել, աշխատանքով ձեռք բերել, ստանալ:

բ) Բազմիմաստ բառի փոխաբերական նշանակության համար տրված է առանձին բացատրություն՝ փխբ. համառոտագրությամբ, ինչպես՝

ԳԵՐԱՐՏՕՄԸ, գ. 1. Առատ արտասուք՝ արցունք: 2. փխբ. Մեծ լաց ու կոծ:

7) Փոխառությունների և բառագործածության ոլորտի հարցերը.

ա) Եթե տվյալ գլխաբառը փոխառություն է, ապա գլխաբառից անմիջապես հետո փակագծերում համառոտությամբ նշվում է փոխառության աղբյուրը, ինչպես՝ ԱՄՊԵՏ (պրսկ.), ՀԻՒՊԱՏՈՍ (հուն.), ՏԱՃԱԸ (պրսկ.), ՀՐԱՄԱՆ (պիլ.), ՆԱԻԱԿԱՏԻՔ (ի-

րան.), ՔԱՀԱՆԱՅ (ասոր.), ԲԵՄ (հուն.), ԳԱԳԱԹՆ (աքքադ.) և այլն:

Որոշ բառերի դեպքում տրված է միջնորդավորված փոխառության ուղին՝ նշելով թե փոխատու լեզուն, թե՛ փոխառյալ լեզուն, որի միջնորդությամբ տվյալ բառն անցել է հայերենին, ինչպես՝

ԱԲԲԱՅ (ասոր., հուն.-ից), ի, ից, գ. Վանահայր, կրոնավոր, վանական:

բ) Որոշ բառերի համար նշված է դրանց (իմաստների) գործածության ոլորտը, ինչպես՝

ՕԸՆԵԱԼ, էլոյ, ոց, ա. 1. (կրոն.): ՕԸՆՆՈՒԹԻՒՆ, 7. (եկեղ.):

գ) Մասնագիտական եզրույթների և բառերի պատճենված իմաստների համար տրված են հատուկ նշումներ, ինչպես՝

ՉԱՅՆԱԿԻՅ, կցի, աց, ա. 3. (քեր.) Բաղաձայն: 4. (քեր.) Լծորդ հնչյուն:

ԲԱՅԱԾԱՆՕԹԱՆԱԼ, ացայ, չ. 2. (հունար.) Վհատվել, հուսալքվել:

Բառարանն ընդհանուր առմամբ հաջողված աշխատանք է, որը երևաց նաև ըստ բառարանի կազմության սկզբունքների մեր կատարած մանրամասն վերլուծությունից: Այնուամենայնիվ բառարանը գուրկ չէ նաև մասնակի թերություններից, որոնցից են՝

ա) բառարանում շատ քիչ ենք հանդիպում հոմանիշ բառերի հղումների, օրինակ, կարելի էր հղումներ տալ Զանազան – Պեսպես, Զգօն – Խոհեմ, Թշնամի – Ուտիս, Այրուձի – չեծելագոր, Ընծայ – Պատարագ, Խոնարհ – Չեզ և այլ հոմանիշ բառերի համար:

բ) Լավ կլիներ, որ բառարանագիրը հեղինակային վկայություններով հիմնավորեր հազվադեպ գործածություն ունեցող կամ ընդհանուր գործածական որոշ բառերի մասնավոր նշանակությունները, ինչպես, օրինակ Բամբիշն, Անբմբեր, Սաղար, Նաւակատիք, Յաշաղանք, Քանցել և այլն:

Համոզված կարող ենք ասել, որ Լ. Խաչատրյանի կազմած սույն բառարանը կարող է ծառայել իր նպատակին և լայն ընդունելություն գտնել հայաստանյան ու արտասահմանյան մասնագիտական ամբիոններում և հայագիտական հաստատություններում:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ